

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՔՆԱՇԽԱՏ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/3**

ք.Երևան

« 12 » հունիսի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ավագյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՄԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինքնաշխատ ծանուցման համակարգում դիսկայնության գնահատման նոր չափանիշների ծրագրավորման և ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները,

2.4.6 պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **15 000 000 (Տասնհինգ միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք համաձայնագրով նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.3 Սույն պայմանագրի 2.4.5 և 2.4.6 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կատարողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 89 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման
						Հասցեն և ժամկետը
1	72261110/521	Ներկայացված է տեխնիկական բնութագրում՝ ներկայացված է ստորև՝	դրամ	15 000 000	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում՝ ստորև

Ինքնաշխատ ծանուցման համակարգում ռիսկայնության գնահատման նոր չափանիշների ծրագրավորման և ներդրման ծառայությունների գնման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
 CPV՝ 72261110/521

Ինքնաշխատ ծանուցման համակարգում ռիսկայնության գնահատման նոր չափանիշների ծրագրավորման և ներդրման ծառայություններ

«Հ կառավարության 2019թ. դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 1830-Լ որոշմամբ հաստատված Հավելվածի 2.1.3 կետի պահանջներն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել ծրագրավորելու ինքնաշխատ ծանուցման համակարգի նոր չափանիշներ՝ ըստ տեխնիկական բնութագրի (կցվում է), այսուհետ՝ համակարգ:

Ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանված այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 360 օրացուցային օրվա ընթացքում (ժամանակացույցը կցվում է):

Ներդրվող ծառայություններ

Ծառայությունների ամբողջական շրջանակը ներառում է.

1. Համակարգի չափանիշների ստեղծման համար տեխնիկական առաջադրանքի մշակում,
2. «Հարկատու 3» համակարգում փոփոխությունների ծրագրավորում և համակարգի (ենթահամակարգերի) գործարկում:
3. Ներդրված համակարգի երաշխիքային սպասարկում՝ ծրագրի հանձնում-ընդունումից հետո՝ երկու տարի ժամկետով:

Ներդրվող համակարգի նկարագրություն

Համակարգը բաղկացած է 4 ենթահամակարգերից, մասնավորապես՝

- «Հսկիչ դրամարկղային մեքենաներով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման ռիսկայնության գնահատման» N22 չափանիշ,
- «Հաշվարկային փաստաթղթերով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման ռիսկայնության գնահատման» N 22,23,24,25,26,27,28,29,30,31 չափանիշներ,
- «Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի» N16, N17 չափանիշներ,
- «Հարկ վճարողների վարքագծի ռիսկայնության գնահատման այլ չափանիշներ»՝ N1, N2 :

Նախատեսվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տարբեր տվյալների համադրմամբ որոշակի ելքային արդյունքների ապահովում:

1. Բոլոր 4 ենթահամակարգերը պետք է ունենան հետևյալ բաժինները.

ա) BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:

բ) Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:

գ) Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:

դ) Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժիններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:

ե) Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:

Ծանոթություն՝

- Հսկիչ դրամարկղային մեքենաներով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման ռիսկայնության գնահատման N 22 չափանիշի ծանուցման դեպքում ՀԴՄ-ի էկրանի վրա հարկ վճարողին ծանուցման վերաբերյալ հաղորդագրության ուղարկման հնարավորություն,

- Ծանուցումների ուղարկում իրականացնելու համար աշխատակիցը սեղմում է «Ուղարկել» կոճակը, որի դեպքում բացվում է զգուշացնող հաղորդագրություն «Ուշադրություն» վերնագրով և «Համոզվա՞ծ եք, որ ցանկանում եք ուղարկել ծանուցում» տեքստով: «Այո» կոճակը սեղմելու դեպքում ուղարկում է ծանուցումներ ցանկում առկա ՀՎՀՀ-ներին և դատարկվում է «ծանուցումների ուղարկում» աղյուսակը, իսկ «Ոչ» կոճակը սեղմելու դեպքում փակվում է հաղորդագրությունը:

- Հարկ վճարողների կողմից բացատրությունները ստացվում են ինքնաշխատ: Վերջիններս ցուցադրվում են Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» բաժնում՝ PDF ձևաչափով.

Ներդրված համակարգի երաշխիքային սպասարկում

Երաշխիքային սպասարկումը պետք է գործի ծրագրի հանձնում-ընդունումից հետո՝ երկու տարի ժամկետով:

Այն պետք է ներառի հետևյալ ծառայությունները.

- Համակարգի խնդիրների շտկում:

- Ներդրված համակարգին վերաբերող տեխնիկական խնդիրների առկայության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուի հարցադիմումներին պատասխանելու հնարավորություն, աշխատանքի հետևյալ պայմաններով՝ Աշխատանքային ժամերը աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան աշխատակիցների ուսուցանում:

Իրավական պայմաններ

- Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել, հրատարակել, փոխանցել, տեղափոխել դրանք իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:

- Կատարողը պատվիրատուին է տրամադրում համակարգերի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանի և այլ կիրառական ծրագրերի տեղակայման սցենարներ, կիրառական ծրագրեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար, համակարգերի ներդրումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ հիմուտ մասնագետների համար հասկանալի ձևով նշված կլինեն համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը) և այլ փաստաթղթերը:

- Կատարողը պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.

1. Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերը ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճեն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի:

2. Ցանկացած լրանշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն

ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխան են լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:

3. Ծրագրային կողը կպարունակի ողջ տեղեկատվությունը՝ ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կողը և համապատասխան փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթագայության սխեմաները և այլն:

Ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերի պատրաստումը և տրամադրումը առկա համակարգերի համար չի նախատեսվում, սակայն ցանկացած լրամշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին պետք է տրամադրի փոփոխված ծրագրային կողը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխան են լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:

Լրացուցիչ պայմաններ

1. Կատարողը պարտավորվում է ներդրվող համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման ժամանակ չբացահայտել նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Տեղեկատվության չբացահայտման վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կատարողի հետ կկնքվի երկկողմանի պայմանագիր:

2. Կատարողի հետ կկնքվի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայի հուսալիության մակարդակի բարձրացման նպատակով՝ էլեկտրոնային համակարգի փոփոխության խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացի մասին համաձայնագիր» (Service level agreement), որով կկարգավորվեն բարձրացվող հարցերը:

3. Կատարողը տրամադրում է համակարգ (Project management software), որը հնարավորություն կընձեռի պատվիրատուին առցանց եղանակով ձևակերպել առաջադրանքներ և հետևել դրանց կատարման ողջ ընթացքին:

4. Վերը նշված բոլոր գործառույթները չեն վերաբերվում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայությանը և ընդգրկում են միայն հարկային ծառայության էլեկտրոնային համակարգերը և կապուղիները:

Ծառայության մատուցման-ժամանակացույց

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ինքնաշխատ ծանուցման համակարգում ռիսկայնության գնահատման նոր չափանիշների ծրագրավորման և ներդրման նպատակով՝ էլեկտրոնային համակարգի փոփոխության խորհրդատվական ծառայությունների

Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 360 օրացուցային օրվա ընթացքում, մասնավորապես, ըստ ծառայության մատուցման տեսակների.

			Գինը ՀՀ դրամ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 1			
Հ/Հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական առաջադրանքի մշակում	
1	Համակարգի ստեղծման համար անհրաժեշտ փոփոխություններին վերաբերող տեխնիկական առաջադրանքի մշակում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	4 902 000
Ենթահամակարգ			
1.1	«Հսկիչ դրամարկղային մեքենաներով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման ռիսկայնության գնահատման» N 22 չափանիշ ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	326 800
Բաժիններ			

1.1.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների դիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	245 100
1.1.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:		
1.1.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
1.1.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
1.1.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		
Ենթահամակարգ			81 700
1.2	«Հաշվարկային փաստաթղթերով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման դիսկայնության գնահատման» N 22,23,24,25,26,27,28,29,30,31 չափանիշների մասով ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	3 268 000
Բաժիններ			
1.2.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների դիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	3 268 000
1.2.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:		
1.2.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
1.2.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
1.2.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		
Ենթահամակարգ			
1.3	«Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի» N 16, N 17 չափանիշների մասով ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	653 600

Բաժիններ			
1.3.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	261 440
1.3.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	392 160
1.3.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
1.3.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
1.3.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		
Ենթահամակարգ			
1.4	«Հարկ վճարողների վարքագծի ռիսկայնության գնահատման այլ» N 1, N 2 չափանիշների մասով ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	653 600
Բաժիններ			
1.4.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում	555 560
1.4.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:		
1.4.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
1.4.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
1.4.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 2			
Հ/Հ	Ծառայության անվանումը	Ծրագրավորում և գործարկում	
2	«Հարկատու 3» համակարգում փոփոխությունների ծրագրավորում և համակարգի գործարկում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	10 098 000
Ենթահամակարգ			

2.1	«Հսկիչ դրամարկային մեքենաներով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման ռիսկայնության գնահատման» N 22 չափանիշի մասով ենթահամակարգի ծրագրավորում և գործարկում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	612 180
Բաժիններ			
2.1.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	612 180
2.1.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:		
2.1.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
2.1.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
2.1.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		
Ենթահամակարգ			
2.2	«Հաշվարկային փաստաթղթերով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման ռիսկայնության գնահատման» N 22,23,24,25,26,27,28,29,30,31 չափանիշների մասով չափանիշների մասով ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	6 628 980
Բաժիններ			
2.2.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	6 628 980
2.2.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:		
2.2.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
2.2.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
2.2.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		

Ենթահամակարգ			
2.3	«Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի» N 16, N 17 չափանիշների մասով ենթահամակարգի ծրագրավորում և գործարկում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	1 224 360
Բաժիններ			
2.3.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների դիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	489 744
2.3.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	734 616
2.3.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
2.3.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
2.3.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		
Ենթահամակարգ			
2.4	«Հարկ վճարողների վարքագծի դիսկայնության գնահատման այլ չափանիշներ»՝ N 1, N 2 չափանիշների մասով ենթահամակարգի ծրագրավորում և գործարկում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	1 632 480
Բաժիններ			
2.4.1	«BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշների դիսկին բավարարող հարկ վճարողների ցանկերի ստեղծման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 360 օրվա ընթացքում	1 632 480
2.4.2	Ռիսկային համարվող հարկ վճարողների ցանկի՝ Հարկատու 3 համակարգ ներբեռնման հնարավորություն:		
2.4.3	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով հարկ վճարողներին ծանուցումների տրամադրման հնարավորություն:		
2.4.4	Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» և «Ծանուցումների ուղարկում» բաժններում համապատասխան ենթաբաժինների ավելացման հնարավորություն:		
2.4.5	Հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file-online»-ի միջոցով բացատրությունների ներկայացման հնարավորություն:		

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 3		
Հ/Հ	Ծառայության անվանումը	Երաշխիքային սպասարկում
3	Ներդրված համակարգի երաշխիքային սպասարկում	
3.1.1	Համակարգի խնդիրների շտկում	Ծրագրի հանձնում-ընդունումից հետո՝ երկու տարի ժամկետով
3.1.2	Ներդրված համակարգին վերաբերող տեխնիկական խնդիրների առկայության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուի հարցադիմումներին պատասխանելու հնարավորություն	
3.1.4	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան աշխատակիցների ուսուցանում	

***Գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
 ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011013902
 ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

ԿԱՏԱՐՈՂ

«Թիմ Սոլյուշն» ՓԲԸ
 ք. Երևան, Ազատության պողոտա 24/1
 «Ամերիա բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570069343740100
 ՀՎՀՀ 00228737

«Թիմ Սոլյուշն» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ե. Գևորգյան



Տ. Ավագյան

(ստորագրություն)

Տեխնիկական նկարագրություն

Հարկ վճարողների վարքագծի ռիսկայնության գնահատման այլ N 1 չափանիշի՝

«Համապատասխան ժամանակաշրջանի համար՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հայտարարություն չներկայացրած կամ պետական տուրք չվճարած (մասնակի վճարած) հարկ վճարողներ»

Չափանիշի նպատակը

Հարկ վճարողների վարքագծի ռիսկայնության գնահատման այլ N 1 չափանիշը (այսուհետև՝ Չափանիշ) հնարավորություն է տալու առանձնացնել այն հարկ վճարողներին, ովքեր համապատասխան ժամանակաշրջանի համար՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հայտարարություն չեն ներկայացրել կամ պետական տուրք չեն վճարել:

Ներկայումս վերը նշված տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն «Հարկատու 3 և(կամ) «PENTAHO» և(կամ) BI համակարգերի հաշվետվական ձևերում առկա տեղեկատվությունների համադրման արդյունքում:

Սույն համակարգի գործարկումը բխում է ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1830-Ն որոշմամբ ՀՀ ՊԵԿ 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման **ռազմավարական ծրագրի 2.1.3 գործողությունից:**

Ընդհանուր պահանջներ

1. Ռիսկայնության գնահատման N 1 Չափանիշը արտացոլվելու է BI POWER հաշվետվական անալիտիկ համակարգի «Գործարքների ռիսկայնության չափանիշներ» բաժնի «Այլ Չափանիշներ ենթաբաժնում և հնարավորություն է ընձեռելու վեր հանել առանց պետական տուրքի վճարման կառանց սահմանված գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման գործունեության իրականացման ռիսկերը:

2. Չափանիշը ձևավորվելու է յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 3-րդ օրը:


Քայլերի նկարագրությունը

✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշի ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկի ստեղծում excel տարբերակով, որի յուրաքանչյուր տվյալը վերցվում է տվյալների շտեմարանի համապատասխան աղյուսակներից հետևյալ ձևատեսքով.

Հ/Հ	Հ/Հ	Անվանում	Գործունեության ոլորտ	Հաշվետու ժամանակաշրջանում 900005001616,900005001624,900005001632,900	Ըստ ներկայացված հայտարարությունների հաշվարկված պետական տուրքերի	Տարբերություն	Գործունեության իրականացման ժամանակահատվածի սկիզբ-ավարտ ըստ ամիսների												Վերջին ստուգման ամսաթիվ	Հ/Հ	Բաժին	
							1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				


✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգին «Գործարքների ռիսկայնության չափանիշներ» բաժնում անհրաժեշտ է ավելացնել նոր՝ «Այլ Չափանիշներ» ենթաբաժին:

Նկար 1




✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգից ռիսկային հարկ վճարողները ցանկի արտաձույնը կատարվում է «Այլ Չափանիշներ» ենթաբաժնի համապատասխան Չափանիշի և ցանկի ձևավորման օրը ընտրելուց հետո

Նկար 2




✓ Ռիսկային հարկ վճարողների ցանկի ներբեռնում <3 համակարգ: «Ծանուցումները ուղարկում» բաժնում անհրաժեշտ է ավելացնել նոր ենթաբաժին՝ «Այլ ծանուցումներ» վերնագրով:

Նկար 3




✓ «Ծանուցումների ուղարկում» բաժնի «Այլ ծանուցումներ» ենթաբաժնի «Choose file» կոճակը սեղմելուց հետո աշխատակիցը ընտրում է ներբեռնվող ֆայլը համակարգչի թղթապանակներից, որից հետո սեղմում «Ներմուծել» կոճակը, որի դեպքում համակարգը ինքնաշխատ ձևով ստուգում է ընտրված ցանկի անվանումը, ձևավորման օրը, ՀՎՀՀ-ների համապատասխանությունը, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի համար տվյալ ցանկը մինչև այս ծանուցված չլինելու պայմանը:

Նկար 4




Սխալների բացակայության դեպքում ցանկը ներբեռնվում է «Այլ ծանուցումներ» ենթաբաժնի տվյալ Չափանիշին համապատասխանող սյունակում PDF ֆայլի ֆորմատով: Այս ենթաբաժնու անհրաժեշտ է ավելացնել տվյալ Չափանիշի համարը:

Նկար 5



✓ Ծանուցումների ուղարկում իրականացնելու համար աշխատակիցը սեղմում է «Ուղարկել» կոճակը, որի դեպքում բացվում է զգուշացնող հաղորդագրություն «Ուշադրություն: Վերնագրով և «Համոզվա՞՞ծ եք, որ ցանկանում եք ուղարկել ծանուցում» տեքստով:

Նկար 6




Այո կոճակը սեղմելու դեպքում ուղարկում է ծանուցումներ ցանկում առկա ՀՎՀՀ-ներին և դատարկվում է «ծանուցումների ուղարկում» աղյուսակը: Ոչ կոճակը սեղմելու դեպքում փակվում է հաղորդագրությունը: Ծանուցումները հարկ վճարողներին տրամադրվում են հարկային մարմնի կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file online»-ի միջոցով: Ծանուցումների ուղարկում էջից ծանուցումներն ավտոմատ ցուցադրվում են ՀՆԷՀ համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնի «Ծանուցումներ» թաբում:

✓ Հարկ վճարողների կողմից բացատրությունները նույնպես ստացվում են ինքնաշխատ վերջիններս ցուցադրվում են Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» բաժնում: Եթե տվյալ ծանուցման համար ներկայացված է բացատրություն, ցուցադրվում է ներկայացված բացատրության PDF ֆայլը, հակառակ դեպքում դաշտը պետք է լինի դատարկ:

✓ Նկար 7-ում ներկայացված է «Ծանուցումների գրանցամատյան»-ի ինտերֆեյսը:

Նկար 7



«Ծանուցումների գրանցամատյան»-ում անհրաժեշտ է ավելացնել նոր ենթաբաժին՝ «Ա. ծանուցումներ»:

Տեխնիկական նկարագրություն

Հարկ վճարողների վարքագծի ռիսկայնության գնահատման այլ N 2 չափանիշի՝
« Հաշվետու ժամանակաշրջանում ներմուծած պարտադիր դրոշմավորման ենթակա՝
ապրանքների համար ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների հայտ
չներկայացված հարկ վճարողեր»

Չափանիշի նպատակը

Հարկ վճարողների վարքագծի ռիսկայնության գնահատման այլ N 2 չափանիշը (այսուհետև
Չափանիշ) հնարավորություն է տալու առանձնացնել այն հարկ վճարողներին, ովքեր հաշվետու
ժամանակաշրջանում ներմուծել են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ, սակայն չեն
ներկայացրել ապրանքների համար ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների հայտ

Ներկայումս վերը նշված տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն «Հարկատու 3:
և(կամ) «PENTARO» և(կամ) BI համակարգերի հաշվետվական ձևերում առկա տեղեկատվությունները
համադրման արդյունքում:

Սույն համակարգի գործարկումը բխում է ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1830-Ն
դրոշմամբ ՀՀ ՊԵԿ 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման
նազմավարական ծրագրի 2.1.3 գործողությունից:

Ընդհանուր պահանջներ


1. Ռիսկայնության գնահատման N 2 Չափանիշը արտացոլվելու է BI POWER հաշվետվական
անալիտիկ համակարգի «Գործարքների ռիսկայնության չափանիշներ» բաժնի «Այլ Չափանիշներ:
ենթաբաժնում և հնարավորություն է ընձեռելու վեր հանել առանց ակցիզային դրոշմանիշերի և (կամ)
դրոշմապիտակների գործունեության իրականացման ռիսկերը:

2. Չափանիշը ձևավորվելու է յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 25-րդ օրը:

Քայլերի նկարագրությունը


✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգից դիսկային հարկ վճարողները ցանկի արտաձույնը կատարվում է «Այլ Չափանիշներ» ենթաբաժնի համապատասխան Չափանիշ և ցանկի ձևավորման օրը ընտրելուց հետո

Նկար 2




✓ Դիսկային հարկ վճարողների ցանկի ներբեռնում <3 համակարգ: «Ծանուցումներ| ուղարկում» բաժնում անհրաժեշտ է ավելացնել նոր ենթաբաժին՝ «Այլ ծանուցումներ» վերնագրով:

Նկար :



✓ Ծանուցումների ուղարկում իրականացնելու համար աշխատակիցը սեղմում «Ուղարկել» կոճակը, որի դեպքում բացվում է զգուշացնող հաղորդագրություն «Ուշադրություն վերնագրով և «Համոզվա՞ծ եք, որ ցանկանում եք ուղարկել ծանուցում» տեքստով:

Նկար 6




Այո կոճակը սեղմելու դեպքում ուղարկում է ծանուցումներ ցանկում առկա ՀՎՀՀ-ներին և դատարկվում է «ծանուցումների ուղարկում» աղյուսակը: Ոչ կոճակը սեղմելու դեպքում փակվում է հաղորդագրությունը: Ծանուցումները հարկ վճարողներին տրամադրվում են հարկային մարմնի կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file online»-ի միջոցով: Ծանուցումների ուղարկում էջից ծանուցումներն ավտոմատ ցուցադրվում են ՀՆԷՀ համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնի «Ծանուցումներ» թաբում:

✓ Հարկ վճարողների կողմից բացատրությունները նույնպես ստացվում են ինքնաշխատ վերջիններս ցուցադրվում են Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» բաժնում: Եթե տվյալ ծանուցման համար ներկայացված է բացատրություն, ցուցադրվում է ներկայացված բացատրության PDF ֆայլը, հակառակ դեպքում դաշտը պետք է լինի դատարկ:

✓ Նկար 7-ում ներկայացված է «Ծանուցումների գրանցամատյան»-ի ինտերֆեյսը:

Նկար 7



«Ծանուցումների գրանցամատյան»-ում անհրաժեշտ է ավելացնել նոր ենթաբաժին՝ «Ա. ծանուցումներ»:

Տեխնիկական նկարագրություն

Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի
իրականացման համար ռիսկայնության գնահատման N 16 չափանիշի՝
«Հանրային սննդի ոլորտում 3 և ավելի աշխատող ունեցող հարկ վճարողը չունի խոհարար և
/կամ/ մատուցող պաշտոնով աշխատող»

Չափանիշի նպատակը

Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի
իրականացման համար ռիսկայնության գնահատման N 16 չափանիշը (այսուհետ՝ Չափանիշ
հնարավորություն է տալու առանձնացնել հանրային սննդի ոլորտում գործող այն հարկ
վճարողներին, որոնք ունեն 3 և ավելի աշխատող, սակայն չունեն գրանցված խոհարար և մատուցող
պաշտոնով աշխատող:

Ներկայումս վերը նշված տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն «Հարկատու 3
և(կամ) «PENTARO» և(կամ) BI համակարգերի հաշվետվական ձևերում առկա
տեղեկատվությունների համադրման արդյունքում:

Սույն համակարգի գործարկումը բխում է ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1830-Ն
որոշմամբ ՀՀ ՊԵԿ 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման
ռազմավարական ծրագրի 2.1.3 գործողությունից:

Ընդհանուր պահաջներ

1. Ռիսկայնության գնահատման N 16 Չափանիշը արտացոլվելու է BI POWER հաշվետվական
անալիտիկ համակարգի «Գործարքների ռիսկայնության չափանիշներ» բաժնի «Եկամտային
ենթաբաժնում և հնարավորություն է ընձեռելու վեր հանել չգրանցված աշխատողի ռիսկերը:
2. Չափանիշը ձևավորվելու է յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 25-րդ օրը:


Քայլերի նկարագրությունը

✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակու Չափանիշի ռիսկին բավարարող հարկ վճարողների ցանկի ստեղծում excel տարբերակով, որի յուրաքանչյուր տվյալը վերցվում է տվյալների շտեմարանի համապատասխան աղյուսակներից հետևյալ ձևատեսքով.

<<	< >	Անվանում	Գործունեության ոլորտ	Աշխատողների քանակ հաշվետու	Որից	Քաղ.իրավակ.քան	Ֆիսկալ հասույթ	<Փ իրացման շրջանատարություն	Վերջին ստուգման ամսաթիվ	<ԿԿ ԲԿԻՆ

✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգից ռիսկային հարկ վճարողները ցանկի արտաձում, որը կատարվում է BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգի «Գործարքների ռիսկայնության չափանիշներ» բաժնի «Եկամտային» ենթաբաժնի համապատասխան Չափանիշը և ցանկի ձևավորման օրը ընտրելուց հետո


Նկար



✓ Ռիսկային հարկ վճարողների ցանկի ներբեռնում <3 համակարգ: «Ծանուցումներ ուղարկում» բաժնի «Եկամտային ծանուցումներ» ենթաբաժնի «Choose file» կոճակը սեղմելուց հետո

✓ Ծանուցումների ուղարկում իրականացնելու համար աշխատակիցը սեղմում է «Ուղարկել» կոճակը, որի դեպքում բացվում է զգուշացնող հաղորդագրություն «Ուշադրություն» վերնագրով և «Համոզվա՞՞ծ եք, որ ցանկանում եք ուղարկել ծանուցում» տեքստով

Նկար 4



Այո կոճակը սեղմելու դեպքում ուղարկում է ծանուցումներ ցանկում առկա ՀՎՀՀ-ներին և դատարկվում է «ծանուցումների ուղարկում» աղյուսակը: Ոչ կոճակը սեղմելու դեպքում փակվում հաղորդագրությունը: Ծանուցումները հարկ վճարողներին տրամադրվում են հարկային մարմնի կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file online»-ի միջոցով: Ծանուցումների ուղարկում էջից ծանուցումներն ավտոմատ ցուցադրվում են ՀՆԷՀ համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնի «Ծանուցումներ» թաբում:

✓ Հարկ վճարողների կողմից բացատրությունները նույնպես ստացվում են ինքնաշխատ Կերջիններս ցուցադրվում են Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» բաժնում: Եթե տվյալ ծանուցման համար ներկայացված է բացատրություն, ցուցադրվում ներկայացված բացատրության PDF ֆայլը, հակառակ դեպքում դաշտը պետք է լինի դատարկ:

✓ Նկար 5-ում ներկայացված է «Ծանուցումների գրանցամատյան»-ի ինտերֆեյսը:

Նկար



Հարկասու 3

ՓԱՏՏԱԹԻՋԵՐ ԶԱՇԿԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵՆԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎՈՐՈՒՄ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՆԸ

ՇԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՅԱՄԱՏՅԱՆ

300 ՇԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ 30 ՇԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵԿԱՄՏՅԵՆ ՇԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Գտնել

ԶԿԶԶ

ՏԶՏ

Կարգավիճակ

Բողոքարկում

- Ցանկացած
- ԶԿԱԿ թիվ 1 բաժին
- ԶԿԱԿ թիվ 2 բաժին
- ԶԿԱԿ թիվ 3 բաժին
- ԶԿԱԿ թիվ 4 բաժին

Բողոք

Բողոք

Շանուցումների ուղարկման
օրը, ամիսը, տարեթիվը

Զափանիչ

Բողոք

Բացատրությունների
ներկայացման օրը, ամիսը,
տարեթիվը

Գտնել

Ենթոլորտում

Ենթ

Տեխնիկական նկարագրություն

Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի իրականացման համար ռիսկայնության գնահատման N 17 չափանիշի՝ «Գործատուի մոտ գրանցված է վարձու աշխատող (բացի քաղաքացիաիրավական պայմանագրով գրանցված), չի ներկայացվել եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ»

Չափանիշի նպատակը

Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման մոնիտորինգի իրականացման համար ռիսկայնության գնահատման N 17 չափանիշը (այսուհետ՝ Չափանիշ հնարավորություն է տալու առանձնացնել այն հարկ վճարողներին, որոնք ունեն գրանցված վարձու աշխատող, սակայն չեն ներկայացրել եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ:

Ներկայումս վերը նշված տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն «Հարկատու 3 և(կամ) «PENTARO» և(կամ) BI համակարգերի հաշվետվական ձևերում առկա տեղեկատվությունների համադրման արդյունքում:

Սույն համակարգի գործարկումը բխում է ՀՀ կառավարության 12.12.2019թ. թիվ 1830-Ն որոշմամբ ՀՀ ՊԵԿ 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման **նազմավարական ծրագրի 2.1.3 գործողությունից:**

Ընդհանուր պահանջներ

1. Ռիսկայնության գնահատման N 17 Չափանիշը արտացոլվելու է BI POWER հաշվետվական անալիտիկ համակարգի «Գործարքների ռիսկայնության չափանիշներ» բաժնի «Եկամտային ենթաբաժնում և հնարավորություն է ընձեռելու վեր հանել եկամտային հարկ թերհայտարարագրման ռիսկերը:

2. Չափանիշը ձևավորվելու է յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 25-րդ օրը:


Քայլերի նկարագրությունը

✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգում ինքնաշխատ եղանակով Չափանիշի դիսկին բավարարող հարկ վճարողների ցանկի ստեղծում excel տարբերակով, որի յուրաքանչյուր տվյալը վերցվում է տվյալների շտեմարանի համապատասխան աղյուսակներից հետևյալ ձևատեսքով.

Հ/Հ	Հ/Հ	Անվանում	Աշխատողների թվաքանակ	ՀԱՍԿ բաժին

✓ BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգից դիսկային հարկ վճարողները ցանկի արտաձում, որը կատարվում է BI POWER հաշվետվական-անալիտիկ համակարգի «Գործարքների դիսկայնության չափանիշներ» բաժնի «Եկամտային» ենթաբաժնի համապատասխան Չափանիշը և ցանկի ձևավորման օրը ընտրելուց հետո


Նկար



✓ Դիսկային հարկ վճարողների ցանկի ներբեռնում Հ3 համակարգ: «Ծանուցումներ ուղարկում» բաժնի «Եկամտային ծանուցումներ» ենթաբաժնի «Choose file» կոճակը սեղմելուց հետո

✓ Ծանուցումների ուղարկում իրականացնելու համար աշխատակիցը սեղմում է «Ուղարկել» կոճակը, որի դեպքում բացվում է զգուշացնող հաղորդագրություն «Ուշադրություն» վերնագրով և «Համոզվա՞՞ծ եք, որ ցանկանում եք ուղարկել ծանուցում» տեքստով

Նկար 4




Այո կոճակը սեղմելու դեպքում ուղարկում է ծանուցումներ ցանկում առկա ՀՎՀՀ-ներին և դատարկվում է «ծանուցումների ուղարկում» աղյուսակը: Ոչ կոճակը սեղմելու դեպքում փակվում հաղորդագրությունը: Ծանուցումները հարկ վճարողներին տրամադրվում են հարկային մարմնի կողմից հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՀՆԷՀ)՝ «file online»-ի միջոցով: Ծանուցումների ուղարկում էջից ծանուցումներն ավտոմատ ցուցադրվում են ՀՆԷՀ համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնի «Ծանուցումներ» թաբում:

✓ Հարկ վճարողների կողմից բացատրությունները նույնպես ստացվում են ինքնաշխատ վերջիններս ցուցադրվում են Հարկատու 3 համակարգի «Ծանուցումների գրանցամատյան» բաժնում: Եթե տվյալ ծանուցման համար ներկայացված է բացատրություն, ցուցադրվում ներկայացված բացատրության PDF ֆայլը, հակառակ դեպքում դաշտը պետք է լինի դատարկ:

✓ Նկար 5-ում ներկայացված է «Ծանուցումների գրանցամատյան»-ի ինտերֆեյսը:

Նկար 5



Տեխնիկական նկարագրություն

Հսկիչ դրամարկղային մեքենաներով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման
նիսկայնության գնահատման N 22 չափանիշի՝

«ՀԴՄ(ներ)-ով կատարված՝ օգտագործված կանխավճարի գումարը փոքր է կանխավճարի
գումարի 60%-ից»

Չափանիշի նպատակը

Հսկիչ դրամարկղային մեքենաներով կատարվող գործարքների մոնիտորինգի իրականացման նիսկայնության գնահատման N 22 չափանիշը (այսուհետ՝ Չափանիշ հնարավորություն է տալու առանձնացնել այն հարկ վճարողներին, որոնց ՀԴՄ(ներ)-ով կատարված օգտագործված կանխավճարի գումարը փոքր է կանխավճարի գումարի 60%-ից: Չափանիշ միջոցով հնարավոր է վեր հանել այն հարկ վճարողներին, որոնք տպում են կանխավճարի կտրոններ, սակայն չեն իրականացնում կամ տպած կանխավճարին ոչ համապատասխան են իրականացնում կանխավճարի օգտագործումը:

Ներկայումս վերը նշված տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն «Հարկատու 3» և(կամ) «PENTHO» և(կամ) BI համակարգերի հաշվետվական ձևերում առկա տեղեկատվությունների համադրման արդյունքում:

